

գաւառի վերաբերութեամբ կարելի է ասել, որ Ա. Ե. Հափառ Էօր ուսումնաճաւալ սորբ փափագը, և բարեմիտ պատուէրը ինչպէս որ պարտն է դեռ իրագործուած չէ. վասն զի կան գիւղեր, որոց մէջ տակաւին ուսումնարաններու նշոյլ երբէք չկայ. կան գիւղեր էլ՝ որոց մէջ թէև մի երկու սենեակ ուսումնարանի համար ձեռնարկած են պատրաստելու, բայց կամ դեռ թերակատար են նոցա շինութիւնները, և կամ որոնք որ աւարտուած են՝ նոցա մէջ էլ ըստ մեծի մասին պատշաճաւոր կերպով դաստաւութիւն չէ շարունակուած, հետեալաբար դեռ ապարդիւն փիճակի մէջ են. զուցէ ժողովուրդը չէ կորող բարեկարգ ուսումնարաններ պահպանել, քանի որ դեռ իր օրական ապրուստը հոգալու հաղիւ հաղ ձեռնտու կգտուի իւր նիւթական միջոցը. սակայն այսու ամենայնիւ ըստ իս բողոքովին չի կարող արգարանալ այս բանի մէջ, և ապագայ սերունդին պարտական մնալ. վասն զի իւր չքաւոր կարծած դրութեան մէջ դարձեալ կանէ շատ աւելորդ ծախսեր ինչպէս նշանադրութեանց, հարսնատեսի, փեսատեսի, հարսանիքի, պատարագ անելոյ և ննջեցելոյ մասին հացկերոյթի և այլ անտեղի սովորութեանց համար գործադրելով քան թունկոց օկսեալ մինչև քառասուն թունկից աւելի արող և զինի՝ նոյնչափ ևս խորակներ, նաև բաւականին չայ, շաքար, որոյ գործադրութիւնը այս վերջին տարիներս մտած է մեր գիւղական ժողովրդոց մէջ ուրախութեան հանդիսականարութեանց ժամանակ բոլորովին անկանոն և անչափաւոր կերպով. սոյնպէս և վայրենաբարոյ Քրտաց սովորութեան հետեւելով բաշլուղ և խալթ տալով հարսնացուի ծնողաց և մերձաւոր ազգականներուն, որոց արգելիւր մասին թէև ինչպէս առ Տէր հանդուցեալ Մատթէոս Աթուղիկոսը նոյնպէս և այժմեան Ա. Ե. Հափառ Էայրապետը յատկապէս կոնդակներ պրած են, բայց ինչպէս կլլուի՝ դեռ բոլորովին այդ հիմնաստիկան անկարգ և վնասակար սովորութիւնը անհետացած չէ ժողովրդի միջից. ահա այսպիսի ծախսերը եթէ չլինին աւելորդ տեղը, որոց մասին և շատեր կան որ պարտուց տակ կձնչուին, և այս ծախսեր անելու կարող անձներ որքան որ կլինին իւրաքան-

չիւր գիւղի մէջ՝ եթէ ծախուց կիսով չափը իւրեանց և զրացեաց որդւոց կրթութեանը զոհն բարեսրտաբար, հարկաւ կարող են փոքր իշտե բարեկարգ ուսումնարաններ ունենալ, և նոցա պատուինըր վայելելով միթարուել՝ և հասարակաց բարեկաւութեան պատճառ դառնալ. ո՞հ, հաղար երանի էր եթէ այսպիսի օգտաւէտ բաներու վերայ ուշադրութիւն դարձնողներ և հաստատակամութեամբ աշխատողներ դուրս գային մեր գիւղական հասարակութեանց մէջ, ինչքան պիտի նեղութիւններ և տառապանքներ անհետանային նոցա խղճալի կենցաղավարութեան տխուր հորիզոնից և ինչքան պիտի ապահովուէր և բարեքանար նոցա ապրուստի և կեցութեան վիճակը, որուն և կամ ջերմագին սրտիւ փափագող

Ս. Արաբաբէկեանց

Ի 12-ի Սեպտեմբերի 1872-ի

ՍԱՀԱՆԴՐԱՊԵՏ:

ՊԱՏԱՍԽԱՆ

“Խրեմ- և Բեասարաբէոյ քանի մի Էպիսկոպոսական Դպրոցաց Եկեղեցի Կրտսէական Դպրոցի Եկեղեցի, Կրտսէական Դպրոցի Եկեղեցի:

Թէոդոսիոյ Էպիսկոպոսական Դպրոցաց Էպիսկոպոսութիւնը, ինչպէս նաև առ հաստատակ բարեպաշտ Էպիսկոպոս հասարակութիւնը տարւոյս Երաւատ ամսագրոյն Սեպտեմբերի թերթին մէջ քաղաքիս ժողովրդական Դպրոցաց վրայ տեսութիւն կոչուած յօդուածը կարգալով ցաւով սրտի զարմացաւ, և տեսնելով որ այդ գրողը ստոյգ տեղեկութիւն չունի, հարկ կօսպենք այս պատասխանը հրատարակել. որպէս զի ոչ թէ միայն իւր սխալ կարծիքները ուղղենք, այլ նաև ճշմարտութիւնը յայտնած ինկնը մեր Էպիսկոպոսութեանը և հասարակաց առջև:

Քաղաքիս բարեպաշտ Էպիսկոպոսական Դպրոց Էպիսկոպոսական Դպրոցաց Էպիսկոպոսական Դպրոցի Եկեղեցի Կրտսէական Դպրոցի Եկեղեցի, Կրտսէական Դպրոցի Եկեղեցի:

եռանդը երբէք ժողովրդեան սրտին մէջ մարած չէ, ուստի երբոր Սրբազան Եղիազար Արքեպիսկոպոսը նախնիքեանի և Բնասարարոյ առաջնորդ նշանակուեցաւ հազար ութը հարիւր վաթսուս և եօթնին, և իւր ուղեորութեան մէջ այցելութեան զայով ի Թէոդոսիա տեսաւ և լսեց ժողովրդեան եռանդը, մանաւանդ թէ ինքը ժողովուրդը դիմեց նորա՝ որ քաղաքիս Հոգեւոր Ծխական զարդները բարեկարգէ և ապահովեն, նոցա խնդիրը և աղերսը լսելով Սրբազան հովիւր՝ երկք անձինք ընտրել տուաւ, և Հոգաբարձու հաստատեց ժողովրդական երկսեռ զարդաց, յորոց մին Մեծարդոյ Յովսէփ Աթուռնձին էր, միւսը Վարդերէս Զեմպերձին, և երրորդը Մկրտիչ Արութեանը:

Ինչպէս որ ժողովուրդը իւր Հոգաբարձուաց ընտրութիւնը ըստ արժանւոյն արած էր, նոյնպէս նոցա ևս անձնանուէր աշխատասիրութեամբ ձեռք զարկին զարդները բարեկարգել: Հոգաբարձուաց առաջին գործը եղաւ նորաշէն զարդ մի կանգնել ազգին մանկանց համար՝ որոյ մեծ կարեւորութիւն կար, ժողովուրդը հետերին միակամ՝ և միասնոր հօւրդ էր, ուստի Ս. Սարգիս Եկեղեցւոյն շրջապատին մէջ կողմը հազար ուսուցիչ բաւականատի հոգ գնելով նուիրեց որ Ազգին մանկանց զարդը շինուի, և շինութեան դրամօք և զանազան օգնութիւններով ևս ձեռնտու եղաւ:

Թէպէտ և երկք Հոգաբարձուք ևս մանակից հաղորդ էին այս գովելի աշխատասիրութեան, բայց զխաւորապէս զարդոյն շինութիւնը և բարեկարգութիւնը յանձնել էին Հոգաբարձու Յովսէփ Աթուռնձին, որ ազգասիրական ոգով աշխատեցաւ անխնայ, միշտ և հնարք գտաւ, և յաջողութեամբ աւարտեց, ուր ազգին մանկունքը կղեւնեղին այժմ՝ և կսորուն, որոյ համար Աղլը կօրհնէ և պիտի օրհնէ միշտ իւր հաւատարիմ աշխատաւորը:

Երբ որ մանկանց զարդը աւարտեցաւ՝ սկսաւ Հոգաբարձուն Օրիորդաց զարդոյն շինութիւնը մտածել, որովհետեւ յատուկ զարդ չկար, և օրիորդք վարձու կքալէին, որ զարդաց անտեսական կառավարութեան բաւական նեղութիւն կուտար: Այս խորհրդին հետզհետէ համադուելով, երկք տարի վերջը ընկերակից Հոգաբարձուաց

հետ խորհրդակցելով գեղեցիկ հնարք մի գտաւ իւր խորհուրդը ի դուռն հանել: Յայտնի էր որ զարդները յատուկ դրամադուռ և կամ յաւելուած գումար չունէին, հարկ էր ինչպէս մանկանց նոյնպէս նաև Օրիորդաց զարդոյն շինութեան ժողովուրդը ձեռնտու լինէր:

Աւստի Հոգաբարձուն պաշտօնակցօք ի միասին հրաւիրեց ժողովուրդը ի խորհուրդ, յայտնեց այն մեծ նեղութիւնը որ Օրիորդք վարձու կքալէին, և առաջարկեց որ Օրիորդաց զարդը կանգնելու մի միայն հնարքն է՝ եթէ յօժարի ժողովուրդը՝ իւրաքանչիւր որ հարկբական և կամ յիսնական ուսուցիչ փոխ տալ, որով բաւական գումար կլինէր, և կարելի էր զարդոյն հիմը ձգել, և կիսուս տանայր Հոգաբարձութիւնը ժողովրդէն փոխ առած դրամը չորս տարիէն հատուցանել տարուէ տարի քսանհինգական ուսուցիչ:

Միաբերան ժողովուրդը Հոգաբարձութիւնն առաջարկութիւնը գովեց, ընտրուեցաւ և անմիջապէս ի գործ դրաւ, ժողովրդեան եռանդը ևս առաւել քաջաբերեց զՀոգաբարձուն, ուստի իսկոյն սկսաւ զարդոյն հիմը ձգել Ս. Սարգիս Եկեղեցւոյն շրջապատին միւս երեսը: Իսկ զարդը վեց ամսուան մէջ յաջողութեամբ աւարտեցաւ, և թէպէտ դրամին պակասութիւնը արդէք էր՝ բայց Հոգաբարձուն յաջից ամենայն դժուարութեանց բաւական գումար առժամանակ իրմէ նուիրելով:

Վեց տարի անընհատ յիշեալ Հոգաբարձուք խոհեմ և բարեկարգ կառավարութեամբ պաշտօնին վարեցին, բայց որովհետեւ անձնական այլ և այլ գործոց զբաղմունքներն արդէք էր, այս պատճառաւ հրաժարեցան ի պաշտօնէ տարւոյս Հոգեւորներն ամսոյն երկուքին, որոց հաւատարիմ ծառայութիւնը ժողովուրդը երախտադիտութեան շնորհակալութեամբ պսակելով՝ նոցա տեղ ուրիշ երկք Հոգաբարձու ընտրեց քաղաքիս ժողովուրդական երկսեռ զարդաց:

Միմիայն ճշմարտութիւնը յայտնելու դիտաւորութեամբ հարկ համարեցանք մանրամասնաբար այս տեղեկութիւններս գրել, և ոչ թէ մէք զմեզ այդ անձին առջև արդարացնելու համար, ուստի սկսինք արդ այն յօդուածին զխաւոր խօսքերը քննել և պատասխանել: Իսկո՞՞ք բան է մանա-

ւանդ թէ անհիմն սկզբանց վրայ դատողութիւնը հիմնած սխալելով վհէ ի վիհ պիտի գորի եթէ մէկը գործ գրէ, և գործոյն վրայ կատարեալ և ստոյգ տեղեկութիւն չունենայ: Ուստի առաջին սխալը այս է որ ասիր է թէ Եկեղեցւոյ կրպակաց արդիւնքն ալ՝ որ է ի տարին եօթը հարիւր ուրլի՝ յատկացուցեր է դպրոցաց, և այսպէս կը յայտնէ իբրեւ թէ ցորենի շտեմարաններէն շատ կրպակները այսչափ արդիւնք կրնրեն: — Ճշմարտութեան և զրուածին մէջ մեծ զանազանութիւն կայ: որովհետեւ ոչ թէ հոգաբարձուն այդ արդիւնքը յատկացուցեր է դպրոցաց, այլ նախկին առաջնորդք, տեսնելով որ ժողովրդական դպրոցները կարօտ են, և առանց այդ արդեանց անհնարին է մատակարարել նոցա տնտեսական հոգը: Բայց երբ որ ժողովուրդը իրաւունք և հըրաման ստացաւ այդ կրպակաց արդիւնքը դպրոցաց մատակարարել, տեսաւ որ մեծամեծ նորոգութեանց կարօտ անխնամ թողուած՝ հիմակուան երկը բաժինին մէկը հաղիւ արդիւնք կրնրէր: Ժողովուրդը պատշաճ տեսաւ իւր կողմանէ զուամար մի նուիրելով այն քայքայեալ կրպակաց հիմունքը և հարկաւոր տեղերը նորոգել, որպէս զի կարող լինի առաւել արդիւնք ստանալ, և պատշաճ համարածին պէս ալ արաւ: որով կրնայ արդ չորս հարիւր յիսուն ուրլի արդիւնք ստանալ, և ոչ թէ եօթը հարիւր, ինչպէս որ յօդուած գրողը տեղեկ չլինելով գրեր է:

Այս սխալմունքը բաւական չէ, այլ երկրորդ անգամ ևս կսխալի, մանաւանդ թէ դպրակրութեան որով ցաներ է ասելով թէ, «Կարող եկեղեցւոյ կրպակաց արդիւնքին փոխարէն տեղոյն Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյն պայծառութեան օգնութիւն մի չաներ: — հոգաբարձութիւնը հաւանութեամբ ժողովրդեան մանկանց դպրոցին մէջ յատուկ անձն մի վերակացու նշանակած է: որոյ պարտքն է միանգամայն եկեղեցւոյ մէջ զբարութիւն անել, և աշակերտաց երգեցողութիւն սորուեցնել: Իսկ եկեղեցին ըստ օրինի ունի նաև սեփական տիրացու մ'ալ: Բայց առջի տիրացուն երբ որ Աւհապառ Աթուրդեհկոսին հրամանաՔահանայական աստիճան առնելով իւր վիճակը գնաց, թէ հոգեւոր իշխանութիւնը և թէ ժողո-

վուրդը անմիջապէս տիրացու փնտռել սկսան, զանուեցան այնպիսիք որ ոչ եկեղեցին և ոչ իսկ ժողովուրդը կրնար նոցա տարեկան պահանջմունքը կատարել, մինչև ըստ արժանւոյն գտաւ մէկը և սեփական տիրացու նշանակեց: Իսկ յօդուածին տէրը իրաւունք չունէր սեփական տիրացուն պախարակել, չափազանցական և նկարագրական ձեւերը փաստի տեղ գործածելով ճգնէր և քրնէր խօսքը հաստատել:

Երրորդ սխալմունքը և ճշմարտութեան հակառակ խօսածը այս է որ կասէ թէ Եկեղեցւոյ քահանայն դպիր և կամ երգիչ չեղածին պատճառաւ առանց ժամասացութեան կստիպուի եկեղեցիէն ելլել: — Մենք առանց խորեքը թափանձնելու այս միայն հարկ կսեպենք ասել, որ այսպիսի առիթ մի երբէք պատահած չէ, և մանկանց զբարոցին վերակացուն որոյ պարտքն է ևս զբարութիւն անել եկեղեցւոյ մէջ, կամ պատարադի և կամ ժամասացութեան առաւօտ և երեկոյ և կամ որ և իցէ առթի ներկայ գտնուէր է հանդերձ երգեցող աշակերտօք:

Ոչ միայն այս խնդրոց՝ այլ ժողովրդական զբարոցաց ներքին ընթացքին վրայ ստոյգ տեղեկութիւն չունեցածը կ'յայտնէ ասելով թէ, «Կարող ենք որ Գրոկրամմա, այս ինքն Յուցակ ունին, ոչ ուսմանց առարկայ կայ, և ոչ նաև Հայկաբանութեան ուսուցիչը դիտէ դաստիարակութիւն անել: Պատասխան. դպրոցները ունին այն Գրոկրամման հանդերձ կանոններով, զոր հոգաբարձութիւնը շատ անգամ քննած է ժողովրդով իմիասին: Իսկ հոգաբարձութիւնը դպրոցաց բարեկարգութեան համար արած ժողովքներուն մէջ քննած, տեսած լինելով որ աշակերտք եօթը կամ ութը տարիքէն դպրոց գալով, և տասնը մէկը հաղիւ աւարտած կելլէին, երկը մասը աղքատութեան պատճառաւ, և կերթային ծառայել այլոց քով, որ իւրեանց ծնողաց աղքատութեան օգնեն, և մէկ մասն ալ տէրութեան ուսումնարանները կ'մտնէին, պատշաճ սեպից տնօրինել՝ որ ինչպէս Ռուսերէն լեզուին, նոյնպէս նաև Հայերէն լեզուին սկզբունքը աշխատին աղէկ հաղորդել ուսուցիչք աշակերտաց՝ որ կարենան զուտ խօսիլ, գրել և իմանալ: ուստի այս կարգադրութեան համաձայն

Հայկաբանութեան ուսուցիչն ալ կաշխատի, զի տէ հին և նոր ոճերը, քիչ մ'ալ լիզուաց հրմտութիւն ունի, և պաշտօնին մէջ հաւատարիմ կճառայի:

Հարկաւ այսպիսի դատելէն վերջը՝ վճիռ մի պէտք էր տալ. ուստի կարծիքը կ'աշխտէ և կ'սէ թէ, աւելի լաւ կ'լինէր ըստ իմ՝ կարծեաց եթէ հոգաբարձուաց պիտաւորը՝ Յովսէփ Ալթունճին՝ վերակացուն և զեղապրութեան ուսուցչին ուժ ձիւնները միացնելով առարկայից ուսուցիչ մի վարձէր. — Հոգաբարձութիւնը իւր կարգապրութեանց համար այդ անձին պարտական չէ պատասխանել, սակայն այսպիսի միայն ասնիք որ, թէ վերակացուն և թէ զեղապրութեան ուսուցիչը շատ փորձերով վասն հարկաւորութեան նշանակուած են, Իսկ մէք չհասկացանք թէ ի՞նչ առարկաներ կ'պահանջէ, որովհետեւ արդէն դպրոցաց մէջ զլիսուորները կան, ինչպէս ինքն ալ հասկացած չէ, որ եթէ ժողովուրդը միջոց ունենար՝ առանց իրեն պէս բռնելու մի վաղուց ամենայն բարեկարգութեանց ձեռնամուխ եղած էր:

Բայց այդ անձը որ կարացիր է սուր տեսութեամբը թափանձնել, վարժապետները տեսնել և չափել, ի՞նչպէս տեսութիւնը զօրած և տեսած չէ որ արդեօք դպրոցաց մէջ աշակերտք Արճազիտութիւն կտրուի՞ն թէ ոչ. հարկաւ կտրուին, և սուցիչը քահանայն է. ուրեմն ի՞նչպէս մուցեր է և դասախօսութեան կերպին վրայ յիշատակութիւն մի արած չէ:

Մի և նոյն խնամքը և հսկողութիւնը ունի Հոգաբարձութիւնը Օրիորդաց դպրոցին վերայ ևս, և երկու դպրոցաց մէջ մի և նոյն ուսուցիչը դասախօսութիւն կանեն, բայց մասնաւոր վարժուհի մ'ալ նշանակած է որ նախակրթարանի մէջ Հայերէն դասերէն դատ ձեռագործ ևս կորուսեցնէ, որոյ առած վարձը ոչ սովորական եւէթէ, այլ աշխատութեանը համար է:

Ամերձացնէ խօսքը ասելով թէ, ազգը կարող է պահանջել հոգաբարձուներէն որ Ս. Սարգիս եկեղեցւոյն կրպակացմէ ստացած եօթը հարիւր ուրբի արդեանց փոխարէն մինչև չորս հարիւր ուրբի կրաժշտութեան վարժապետ մի վարձեն. — Ս. Սարգիս եկեղեցւոյն կրպակաց հաշուին

մէջի եղած սխալը արդէն յայանեցինք, և որովհետեւ ինքը Ազգն է իւր դպրոցաց անտեսական հոգը ըստ կարեաց մատակարարող, ուստի ինքն իրմէ ալ չկրնար պահանջել այնչափ որ չկրնար անել և արած չէ, և միայն այն ատեն կարող է աւելի բարեկարգութեանց վերայ մտածել երբ որ ձեռքը միջոց կունենայ. Իսկ թէ որ իրեն անխանայի առաջարկութեանց ձեռնամուխ եղած լինէր, ոչ մեծագործը և ոչ իսկ փոքրագործը կատարել կարենալով՝ երկուքէն ևս վիճագած խաբած էր:

Առ այժմ մէք ևս համառօտ պատասխանելով կ'ընդացնենք խօսքերնիս, խրատելով և յորդորելով զինքը՝ որ համարձակի այնպիսի պատուական լրագրի մի մէջ զրպարտութիւնները տեսութիւն անուանելով հրատարակել:

Ե.

1872 ՆՈՒՄԵՐԷ 22

Ի ԹԵԴՐԱԿԵԱՆ

ԲԻԻԶԱՆԳԵԱՆ ԻԻԲԷԶԱՆԳԵ

ՀԱՅԿԱԿԱՆ ԷՆՈՒԹԻՒՆԵ

Ի ԼԵԱՌԵ ԶԻԹԵՆԵԱՆ

Ասկէ յառաջ Ախտի միջոցաւ ծանուցինք թէ՛ 21/իմենաց լեռան արեւելեան կողմն Ռուսաց ազգին գնած արտին մէջ Հայկական հնութիւններ կը յայտնուին, և խոստացած էինք յայտնուածները հետզհետէ ծանուցանել ի գիտութիւն հետախոյզ հնասիրաց Ազգիս Ահաւասիկ բացուած տեղերուն նկարագրութիւնը, զոր աստ մանրամասն կ'ստորագրեմք. Ռուսաց նոր շէնքին փոքրիկ դահլճին ամիողջ յատակը մանր և գոյնզգոյն մողայքներով և սքանչելի պատկերներով զարդարուած է, այնքան սքանչելի, որ զգայուն սիրտ կըրող ճշմարիտ Հայ մի տեսնելով, առանց արտասուաց կաթիլներ աչքէն թորեցնելու կարող չէ անցնիլ, մանաւանդ եթէ փոքր ինչ ճաշակ ունեցած լինի իւր նախնաց փառաց և պերճութեանց վրայ. Այս մանր և գոյնզգոյն մողայքը վսեմ նրկարները այնպիսի գեղեցիկ յարմարութեամբ և